

ազատութիւն եւ արտօնութիւններ վաճեցին, ինչպէս Պօկտան Գ.ի (1504-1517) եւ Փէթրու Ռառէշի (1527-1538 եւ 1541-1546) օրով, եւ նկատուած էին Մոլտավի պետութեան օգտակար եւ բարգաւաճ տարրերէն մէկը:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Առեւտրական արտօնութիւններէ զատ՝ Հայերը ուրիշ իրաւունքներ ալ ստացան Մոլտավայի իշխաններէն: Այսպէս, անոնք, իրաւունք ունէին իրենց սեփական գործերը զուտ Հայերէ ընտրուած պաշտօնեաներու ձեռքով տնօրինելու: Անոնք արտօնութիւն ստացան Մոլտավիոյ Հայաշատ քաղաքներուն մէջ ունեւնալու իրենց սեփական դատարանները, թաղապետութիւնը, եւայլն, ինչպէս ունէին Լէմպերկի եւ ինչպէս յետոյ ունեցան Կեռլայի եւ Նիւմարէթուպուլի մէջ:

Պուքովինայի երեք գլխաւոր քաղաքները՝ Չերնովից, Սուչովա եւ Մերէթ, մոլտավի իշխանին պատկանելով Հանդերձ, տեսակ մը ներքին ինքնավարութիւն ունէին: Կը կառավարուէին 6-12 հոգիէ բաղկացեալ երդուեալ քաղաքացիներով (Pargari) որոնք ունէին իրենց նախագահը կամ քաղաքապետը (Scholtus): Այն վայրերուն մէջ ուր այնքան բազմաթիւ չէին Հայերը՝ քաղաքային խորհուրդին մէջ կ'ունենային որոշ թիւով երդուեալ քաղաքացիներ, իսկ Հայաշատ քաղաքներու մէջ անոնք ունեցան իրենց սեփական վարչութիւնը:

Ալէքսանդր Բ. Վոյվօտին օրով (1448-1449), Սուչովայի մէջ կը յիշուի Սարգիս անուն Հայ քաղաքապետ մը: Աւելի յետոյ, Կէօրկի Տուքայի օրով ալ, 1669-ին, Կիւրեղ անուն Հայ քաղաքապետ մը ունեցած է Սուչովան, ինչպէս կը յիշեն Տ. Տան (Արեւելեան Հայքի Պալատիկա) եւ Հուրմուզաքի (Հատոր ԺԵ. էջ 784):

ՀԱՅԵՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՐԻ ՄԷՉ

Հայերը քաղաքական դեր ալ կատարած են ուսմէն իշխաններու մօտ, ինչպէս կ'ըսէ Եօռկա (Paralela Istorica, էջ 64): Փէթրու Ռառէշ Վոյվօտին օրով (1527 - 1538 եւ 1541-1564) Հայ մըն էր իր թարգմանը, Վարդիկ անուն, որ միեւնոյն ատեն երկրին մեծ

պօռններէն (աղնուական) մէկն էր: Իր որդին ալ, Իւրաքօ Վարդիկովիչ, նոյնպէս թարգմանի պաշտօն վարած է Մոլտավիոյ Վոյվօտներուն մօտ ԺԶ. դարու վերջին կիսուն (Hurmuzaki XI, էջ 29-30):

Աւելի իյետոյ Միհայ Վիթազուլի օրով, 1600-ին, Հայ մըն էր իր գլխաւոր տական գործակալը, Փէթրու Կրիկօրովիչ Արմէանով, ուրիշ անուամբ Արմին Փէթէր, որմէ նամակներ եւ յիշատակներ կը մնան մինչեւ այսօր (Հուրմուզաքի, Հատոր ԺԲ.):

Փրոֆ. Տօքթ. Ի. Անճէլէսքու խօսելով Հայ տարրին առեւտրական դերին վրայ Ռումանիոյ մէջ, (Histoire Economique des Roumains, Հատոր Ա., Ժընէվ, 1920, էջ 238-244), կը չեչոտէ նաեւ Հայոց ունեցած քաղաքական մեծ կարեւորութիւնը եւ կ'ըսէ. «Անոնք իշխաններու կողմէ կը գործածուէին իբր թարգման իրենց յարաբերութեանց մէջ Արեւելքի Ժողովուրդներուն հետ, եւ նոյնիսկ իբր իշխանական նուիրակ: Քանի կ'աւելնար իրենց կարեւորութիւնը, շնորհիւ իրենց մշակոյթին եւ իրենց առեւտրական փորձառութեան, այնքան տեղ կը գրաւէին ազգային գիտակցութեան մէջ: Այսպէս, Միհայ Պրավուի օրով, որ յաղթեց Ասիական Հայաստանի ճնշիչ Թուրքերուն, մեր քաղաքներու Հայերը խրտեցան, եւ անոնցմէ ամենէն երեւելիները փորձեցին, բուն քարոզութեան մը միջոցաւ, ոտքի հանել իրենց Հայրենակիցները զանոնք ազատելու համար թուրք լուծէն: Բայց երբ տկարացաւ Հայոց քաղաքական կարեւորութիւնը, մեր գլխաւոր գիտական անկախ յարաբերութեանց անհետացման հետ, Հայերը արագաքայլ դիմեցին դէպի Ռումանացում: Անոնք ԺԷ. եւ ԺԸ դարերուն շեշտուած էին, բայց նոր Ժամանակներու սեմին, մեր քաղաքներու բնակչութեան միւս օտար տարրերուն հետ մէկտեղ, նպաստեցին օտարներու տնտեսական ազդեցութեան թափանցման»:

ՀԱՅ ԻՇԽԱՆՆԵՐ

Շթէֆանիցա Վօտան որ Շթէֆան-չէլ-Մարէի թոռը եւ Պօկտան Գ.ի զաւակն էր, կենակցած է Սերբեկա անուն Հայուհիի մը հետ: Սերբեկա Սրբուհիի աղաւաղումը չէ, ինչպէս կարծած են ոմանք, այլ մականունը վերոյիշ-